ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ տիկնայք և աղջիկներ, Հայոց աշխարհի գեղեցկագույն կանայք,

սրտանց շնորհավորում եմ բոլորիդ գարնանային այս չքնաղ տոնի կապակցությամբ:

Կինը կյանքի ու հասարակության շարժիչ ուժն է: Նրա ուսերին է դրված մարդկության շարունակության ապահովման բարձր պատասխանատվությունը:

Անուրանալի մեծ է հայ կնոջ դերը հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում:

Ժամանակը ցույց է տվել, որ նրանք, որ ստեղված են սիրված և պաշտպանված լինելու համար, վտանգի պահին կարողանում են հավասարապես մարտնչել ու իրենց ուսերին կրել պատասխանատվության ծանրությունը:

Պետք եղած ժամանակ նրանք քաջարի մարտիկներ են: Խաղաղության մեջ քնքշության ծով են, քաոսի ժամանակ՝ խաղաղություն որոնող իսկական ընկերներ:

Սիրելի՛ տիկնայք, դուք եք, որ բերում եք սեր ու քնքշություն, քանզի հենց դուք եք դաստիարակում տղամարդու մեջ գեղեցիկը տեսնելու և տալու կարողությունը:

Շարունակե՛ք մնալ այնպիսին, ինչպիսին ձեզ ստեղծել է բնությունը: Ձեր դուստրերի ու քույրերի մեջ սերմանեք հայ կնոջ առաքինությունն ու ողջախոհությունը:

Մշտապես եղեք սիրված և գնահատված, ու թող երբևէ կարիքը չլինի ձեր սեփական ուժն ի ցույց դնելու: Թող երջանկությունն ուղեկից լինի ձեզ ձեր կյանքի բոլոր օրերում:

Խոնարհումս այն կանանց և աղջիկներին, ովքեր վճռորոշ պահին կանացի երջանկության փոխարեն ընտրել են հայրենիքը:

Խոնարհումս բոլոր այն մայրերին, ովքեր հայրենիքին տվել են ամենաթանկը:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան